

ՆՈՐ ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԷԿՈԼՅՈՒՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎՐԱ

Արծրունի Գ.Գ.

Երևանի Մ. Չերացու անվ. պետական բժշկական համալսարանի ԳՀԿ-ի կենսաքիմիական և կենսաֆիզիկական մեթոդների լաբորատորիա, Չայաստան, Երևան

Ներկայացվող աշխատանքում քննարկվում է անթրոպոգեն կերպով փոփոխված արտաքին միջավայրի ֆիզիկական գործոնների ազդեցությունը կենդանի մատերիայի էվոլյուցիայի վրա: Շարադրվածը չի հավակնում բացարձակ ճշմարտության դերին և կրում է հիպոթետիկ բնույթ, սակայն դրա հիմքում ընկած են վաղ ապացուցված տեսություններ և պատճառ-հետևանքային կապեր:

Աշխատանքում ցույց է տրված, որ մեր օրերում դիտվող արտաքին միջավայրի ֆիզիկական գործոնների անթրոպոգեն կտրուկ փոփոխությունները պետք է բերեն էվոլյուցիոն գործընթացի այնպիսի արագացման, որը, ի վերջո, կբերի տեսակային բազմազանության նվազման և կենսաբանական ռեգրեսի: Սպասվող ռեգրեսի որոշակի փուլում հնարավոր է կենսոլորտի գիտակից կոմպոնենտի անհետացում: Եվ սկսած այդ պահից կենդանի նյութի էվոլյուցիան կրկին կընթանա պրոգրեսի ուղղությամբ, ինչը կրկին կբերի գիտակիցության ծագմանը: Ներկա աշխատանքում առաջ քաշված ենթադրություններն ընկած են մատերիայի պարբերական զարգացման և բարդացման վերաբերյալ առկա պատկերացումների հունի և տրամաբանության մեջ: Կենդանի նյութը հանդիսանալով նյութական աշխարհի կազմավորման բարձրագույն ձև, ենթարկվում է բոլոր այն օրինաչափություններին, որոնք հատուկ են մատերիայի էվոլյուցիային ընդհանրապես:

Մատերիայի գիտակից ձևի ի հայտ գալը հանդիսանում է կենդանի նյութի էվոլյուցիայի կրիտիկական կետ: Կենդանի մատերիայի զարգացման պարբերականությունը, ամենայն հավանականությամբ, գտնվում է մատերիայի զարգացման պարբերականության սահմաններում: Մատերիայի էվոլյուցիայի մեկ փուլում, պայթյունից-պայթյուն, տիեզերքի լոկալ շրջաններում կարող են ընթանալ կենդանի նյութի զարգացման բազմաթիվ ցիկլեր: